

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ սիյուռքի նախարարության 2017թ ՀՀ պետական բյուջեով ֆինանսավորված ծախսերի վերաբերյալ

«ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի համաձայն ՀՀ սիյուռքի նախարարության կողմից իրականացվել են հետևյալ ծրագրերը.

1. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 05) ծրագրով նախատեսվել է 287206.6 հազ. դրամ: Կատարվել է վերաբաշխում 2800.0 հազ.դրամի չափով և ճշտված պլանը կազմել է 284406.6 հազ.դրամ, իսկ ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը՝ 274274.8 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 10131.8 հազ.դրամ: Տնտեսումը պայմանավորված է թափուր հաստիքների, գնումների գործընթացում ներկայացված ավելի ցածր գնային առաջարկների, համակարգիչների վերանորոգման, ներքին և արտասահմանյան գործուղման ծախսերի խնայողությունների հաշվին: Գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2016 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 272620.6 հազ. դրամ: 2017 թվականի դրամարկղային ծախսը 2016 թվականի համեմատ աճել է 1654.2 հազ. դրամով, որը պայմանավորված է քաղ. ծառայողների աշխատավարձի բնականոն աճով:

2. «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում /նախարարությունների աշխատակազմերի մասով» (բաժին 01, խումբ 01, դաս 01, ծրագիր 04) ծրագրով նախատեսվել է 87198.6 հազ. դրամ: Կատարվել է վերաբաշխում 2100.0 հազ.դրամի չափով: Ճշտված պլանը կազմել է 89298.6 հազ.դրամ: Ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 74674.3 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 14624.3 հազ. դրամ է: Տնտեսումը պայմանավորված է թափուր աշխատատեղերի, մրցույթներում ներկայացված ցածր գներով, արտասահմանյան և ներքին գործուղումների ծախսերի խնայողությունների, ինչպես նաև ներկայացուցչական ծախսերի խնայողաբար օգտագործմամբ: Գումարը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 82355.1 հազ. դրամ: 2017 թվականի դրամարկղային ծախսը 2016 թվականի նվազել է 7680.8 հազ. դրամով, որը պայմանավորված է մեկ հաստիքի կրճատմամբ:

3. «Արտասահմանյան պաշտոնական գործուղումներ» (բաժին 01, խումբ 01, դաս 03, ծրագիր 04) ծրագրով ճշտված պլանը կազմել է ֆինանսավորումը և

դրամարկղային ծախսը կազմել է 1445.5 հազ. դրամ: 2017 թվականի ընթացքում համաձայն Հայաստանի Հանրապետության Նախագահի ՆԿ-40-Ա, ՆԿ-80-Ա, ՆԿ-156-Ա հրամանագրերի կազմակերպվել է 3 գործուղում: 2016 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 5201.9 հազ. դրամ: 2017 թվականին 3756.5 հազ. դրամով պակաս, քան 2016 թվականին՝ պայմանավորված գործուղումների աշխարհագրությամբ:

4. «Մշակութային միջոցառումների իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր04) ծրագրով նախատեսվել է 257189.1 հազ. դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 257189.1 հազ. դրամ: Փաստացի ծախսը կազմել է 247818.8 հազ.դրամ, տնտեսված գումարը՝ 9370.3 հազ.դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե՝ պայմանավորված այն հանգամանքով, որ մրցույթներում ներկայացվել է ցածր գնային առաջարկ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 325850.6 հազ. դրամ: 2017 թվականի դրամարկղային ծախսը 2016 թվականի նկատմամբ նվազել է 68661.5 հազ. դրամով, որը պայմանավորված է «Իմ Հայաստան» փառատոնի անցկացմամբ, այն տեղի է ունենում 2 տարին մեկ անգամ:

Նպատակներն ու խնդիրները.

Ծրագրի նպատակն է Հայ մշակույթի պահպանումը և տարածումը սփյուռքում՝ հայապահպանությունը: Ծրագրի շրջանակներում իրականացվում են սփյուռքի գիտական և մասնագիտական շրջանակների, հասարակական, քաղաքական, մշակութային գործիչների, հայտնի բարերարների, գործարարների մասնակցությամբ՝ Հայաստանում խորհրդատուների, կոնֆերանսների և հոբելյանական միջոցառումների կազմակերպում, անցկացում և աշխատանք համայնքների հետ:

• Ծրագրում ընդգրկվել են

1. «**Մեր մեծերը**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 3000.0 հազ. դրամ: Ճշտված գումարը՝ 3000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 2980.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 20.0հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Իրականացվել է 2017 թվականին ՀՀ սփյուռքի նախարարության կողմից «Մեր մեծեր» հոշակած՝ Ռուբեն Մամուլյանի, Ալեքսանդր Մանթաշյանցի, Տիգրան Չուխաջյանի, Հովհաննես Այվազովսկու և Սուրբ Ղազար կղզու հայկական կաթոլիկ վանքի մասին պատմող ֆիլմի խտասալիկի հրատարակում, սկավառակների և գրքույկների ձեռք բերում: 2016 թվականի ֆինանսավորման ծավալը կազմել է 4000.0 հազ.դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 3000.0 հազ. դրամ: 2017 թվականի

դրամարկղային ծախսը 20.0 հազ. դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է գնման ընթացակարգի արդյունքում հաղթող կազմակերպության ներկայացրած գնային առաջարկով

2. **«ՀՀ-ում համահայկական խորհրդատողվների անցկացում»** ծրագրի միջոցառման արժեքը 19700.0 հազ. դրամ է: «Սփյուռք ամառային դպրոց» ծրագրից 14235.0 հազ.դրամ վերաբաշխվել է և ճշտված պլանը կազմել է 33935.0 հազ.դրամ: Ծրագրի դրամարկղային ծախսը կազմել է 33808.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝126.4 հազ.դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման նպատակն է ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել համահայկական խորհրդատողվներ: Այս տարի իրականացվել է՝

- «Լեհաստանի հայ համայնք՝ անցյալ և ներկա խորհրդատողով»
- «Առևտրաարդյունաբերական պալատների ներկայացուցիչների համաժողով»
- «Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողով»
- «Սրտաբանների Եվրասիական 6-րդ համաժողով»

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 19632.1 հազ. դրամ: 2017 թվականին 14176.5 հազ.դրամով ավել է քան, 2016 թվականին, որը պայմանավորված է «Հայաստան-Սփյուռք 6-րդ համահայկական համաժողով մասնակիցների քանակի ավելացմամբ կատարված վերաբաշխումով:

3. **«Հայոց ցեղասպանության ճանաչմանը, դատապարտմանը և հետևանքների վերացմանը նպատակաուղղված միջոցառումների ծրագիր»** Ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 5500.0 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 5500 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 5335.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 165.0 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Իրականացվել են՝

- «Հայոց ցեղասպանությանը արտացոլումը 1915թ.մամուլի էջերում» գրքի ձեռք բերում
- «Իսլամացած հայերին նվիրված մշակութային միջոցառում»
- Ցեղասպանության 4-րդ սերնդի հիմնախնդիրները միջոցառման կազմակերպում

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 5406.7 հազ.դրամ 2017 թվականին դրամարկղային ծախսը 71.7 հազ.դրամ պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է մրցույթում հաղթող կազմակերպության ներկայացրած գնային առաջարկով:

4. «**Համահայկական մրցանակաբաշխություն**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 6000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 6000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 6000 հազ. դրամ, որը կիրականացվի 2018 թվականին: Նպատակը խրախուսել Սփյուռքում հայ ազգային ինքնության պահպանման ու զարգացման հարցում կազմակերպությունների, տարբեր խմբերի, առանձին անհատների ունեցած ներդրումը, գնահատել և արժևորել այս ուղղությամբ հայկական համայնքների գործունեությունը: 2016 թվականի դրամարկղային ծախսը ևս կազմել է 6000.0 հազ. դրամ:

5. «**Աջակցություն համայնքների կայացմանը(ՀՀ խորհրդանիշերի ձեռք բերում և առաքում)**» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1000 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 1000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 976.1 հազ դրամ: Ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել ՀՀ պետական խորհրդանիշեր

2016 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 1000.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 23.9 հազ.դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է ձեռք բերվող խորհրդանիշերի գնի նվազմամբ:

6. «**Աշխատանաք սփյուռքի համայնքների հետ**» ծրագրի իրականացման գումարը կազմել է 10000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 10000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 9570.5 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 429.5 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է՝

- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի հայրենադարձության և հետազոտության վարչության պետ Գրիգոր Արշակյանի գործուղումը Երուսաղեմ/Իսրայել/
- ՀՀ սփյուռքի նախարարության աշխատակազմի մերձավոր սփյուռքի հետ կապերի վարչության պետ Տարոն Շագոյանի գործուղումը Թբիլիսի/Վրաստան/
- ԼՂՀ-ի 2 ուսուցիչների համար 2 հատ ավիատոմսի ձեռք բերում Երևան-Բեյրութ-Երևան
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Լեհաստանի Հանրապետություն
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Բեյրութ
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Իտալիայի Հանրապետություն
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Բրյուսել, Կիպրոս
- ՀՀ սփյուռքի նախարարի այցը՝ Մարսել, Ժնև

- «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականի լուսանկարիչ-օպերատոր Ա.Մկրտչյանի գործուղումը Մարսել, Ժնև

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 4394.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 5176.5 հազ. դրամով ավել է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է գործուղումների քանակի ավելացմամբ և ավիատոմսերի արժեքով:

7. «Կրթամշակութային աջակցություն հայ համայնքներին» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 12290.5 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է՝ 12290.5 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը՝ 7977.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ տարբերությունը՝ 4313.5 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է՝

- Հավաք հանդիպման կազմակերպում 1-ին միջոցառում
- Հավաք հանդիպման կազմակերպում 2-րդ միջոցառում
- Հայկական մշակութային 5-րդ փառատոնի շրջանակներում կազմակերպվել է երգիչներ՝ Սոֆի Մխեյանի և Արսեն Սաֆարյանի այցը Լատինական Ամերիկա՝ մասնավորապես՝ Բրազիլիայի Օզասկո քաղաք, այնուհետև՝ Բուենոս Այրես:
- Կազմակերպվել է Ազգային պարարվեստի գործիչ Գագիկ Գինոյանի սաներից՝ պարուսույց Հովհաննես Դաշտոյանի այցը Բրազիլիայի Սան Պաուլո քաղաք՝ Համազգային Հայ Կրթական և Մշակութային Միությանը կից Կիլիկիա և համայնքի այլ պարախմբերի անդամներին վերապատրաստելու նպատակով:

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 9287.3 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 1310.3 հազ. դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է ձեռք բերված տոմսերի քանակով:

8. «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ Հայաստանում կամ սփյուռքում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 10000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 10000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 9855.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 145.0 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում կազմակերպվել և իրականացվել է՝

- «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» /մեկ միջոցառման կազմակերպում/

- «Սփյուռքի հայ համայնքների ղեկավարների տարածաշրջանային հավաքներ» /հինգ միջոցառման կազմակերպում/
- «Ազդարար» կայքում գնման գործընթացների վերաբերյալ հայտարարության տեղադրում

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 9938.5 հազ. դրամ: 2017 թվականի դրամարկղային ծախսը 83.5 հազ. դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է մրցույթում հաղթող կազմակերպության ներկայացրած գնային առաջարկով:

8. «Սփյուռքահայերի ինտեգրման ծրագիր» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 11000.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 11000.0 հազ. դրամ: Դրամարկղայինը՝ ծախսը կազմել է 10978.4 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 21.6 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Միջոցառման շրջանակներում իրականացվել է՝

- Սփյուռքահայ արվեստագետներին նվիրված միջոցառում
- Սփյուռքահայ ուսանողների և աշակերտների համար միջոցառում
- Սփյուռքահայերի ինտեգրման միջոցառումների կազմակերպում
- ՀՀ-ում բնակվող սիրիահայերի հիմնախնդիրներին նվիրված միջոցառում

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է՝ 10915.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 63.4 հազ. դրամ ավել, քան 2016 թվականին, որը պայմանավորված է մրցույթում ներկայացված գնային առաջարկով:

10. «Հայկական սփյուռքի գիտական կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների ու տվյալների միասնական համակարգի ստեղծում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 4000.0 հազ. դրամ, ճշտված պլանը 4000.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 3970.7 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 29.3 հազ. դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի նպատակն է ներուժի հաշվառման մեխանիզմների և տվյալների միասնական համակարգի համալրումն ու սպասարկումը: Ծրագրի շրջանակներում վճարվել է աշխատավարձ մասնագետներին, ինտերնետային կայքի անխափան աշխատանքի, սպասարկման, հանգուցային անվան գրանցման համար վարձավճարներ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 3684.4 հազ.դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 286.3 հազ.դրամով ավել է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է կայքերի վճարներ ավելացմամբ:

11. **«Եվրասիական տարածաշրջանի համայնքների կրթամշակութային զարգացում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 16400.0 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 16400.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 13602.6 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 2797.4 հազ. դրամ, որը ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Գրքի ձեռք բերում
- ԵՏՄ երկրների հայկական կրթօջախների ուսուցիչների վերապատրաստում ՀՀ-ում
- Աջակցություն ԵՏՄ-ը երկրների մշակութային խմբերին ՀՀ-ում
- Ծաղկազարդ երգչախմբի 6 անդամների ավիատոմսի ձեռք բերում ՌԴ-ում համերգներ կազմակերպելու նպատակով

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 16042.0 հազ.դրամ:

2017 թվականին 2439.4 հազ.դրամ պակաս է քան 2016 թվականին պայմանավորված այն հանգամանքով, որ ընդունող կողմը ապահովել է կեցության ծախսը, ինչպես նաև ձեռք բերված ավիատոմսերի քանակով և սակագներով:

12. **«Սփյուռքյան կառույցների և նշանավոր անհատների ծրագրերի իրականացում Հայաստանում»** ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 22298.6 հազ. դրամ, ճշտված պլանը՝ 22298.6 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 22125.0 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 173.6 հազ. դրամ, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- «Ազդարար» կայքում գնման գորընթացների վերաբերյալ հայտարարություն
- Սփյուռքյան կառույցների և սփյուռքահայերի մեծարման միջոցառում^{1,2}
- ՀՀ-ում սփյուռքյան կազմակերպությունների հետ միջոցառման կազմակերպում
- Սփյուռքահայերի կամ սփյուռքյան կառույցների մեծարման համար միջոցառման կազմակերպում
- Հայաստանում սփյուռքյան հայկական կազմակերպությունների հետ միջոցառման կազմակերպում
- Սփյուռքահայերի մեծարման միջոցառման կազմակերպում
- Սփյուռքի նշանավոր անհատների միջոցառման կազմակերպում²

Համայնքային օրերի կազմակերպում 2016 թվականին միջոցառման դրամարկղային ծախսը կազմել է 22159.5 հազ. դրամ 2017 թվականին դրամարկղային ծախսը 34.5

հազ.դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է մրցույթում ներկայացված գնային առաջարկով:

13. «Սփյուռք ամառային դպրոցի կազմակերպում» ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման գումարը կազմել է 115000.0 հազ. դրամ: Նվազեցվել է՝ 14235.0 հազ. դրամով և ավելացվել՝ «ՀՀ-ում համահայկական խորհրդատվորվների անցկացում» ծրագրին: Ճշտված պլանը՝ 100765.0 հազ.դրամ է, իսկ դրամարկղային ծախսը կազմել է 99775.9 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 989.1 հազ. դրամ վերադարձվել է պետ. բյուջե:

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 110076.5 հազ. դրամ: 2017 թվականին ծրագրի դրամարկղային ծախսը նվազել է 10300.6 հազ.դրամով քան 2016 թվականին պայմանավորված կատարված վերաբաշխմամբ և մրցույթներում ներկայացված գնային առաջարկով:

Ծրագրի նպատակն է իրականացնել 5 ուղղությամբ ամառային ուսուցողական դասնթացների կազմակերպում: Իրականացվել է

- Հայոց լեզվի արագացված ուսուցում,
- Սփյուռքի ուսուցիչների, կրթօջախների տնօրենների, կրթական գործի կազմակերպիչների վերապատրաստում,
- Ազգային երգի ու պարի խմբավարների, պարուսույցների վարպետության դասընթացներ,
- Սփյուռքահայ երիտասարդ առաջնորդների և համայնքային գործի կազմակերպիչների դասընթաց,
- Սփյուռքի լրագրողների դասընթաց:

Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ: Մասնակցել է 269 սփյուռքահայ նախատեսված 250-ի փոխարեն՝ աշխարհի 30 երկրներից:

5. «Տարածքային համագործակցության և համահայկական մշակութային ծրագրերի իրականացում» (բաժին 08, խումբ 02, դաս 05, ծրագիր 14) ծրագրով նախատեսվել է 20000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 20000.0 հազ. դրամ: Ծրագրի շրջանակներում իրականացվել է՝

- Երգում ենք Կոմիտաս համահայկական փառատոն միջոցառման իրականացում
- Նոտաների և ձայնաբաժինների համակարգչային հավաքագրում և տրամադում

- Վճարվել է աշխատավարձ ծրագրի աշխատակիցներին
- Վառելանյութի և գրասենյակային նյութերի ձեռք բերում
- Կապի վճարում
- Ազդարար կայքում գնման գործընթացի վերաբերյալ հայտարարության տեղադրում

2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 19800.0 հազ.դրամ: 2017 թվականի 200.0 հազ.դրամով ավել, քան 2016 թվականին, որը պայմանավորված է գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպության կողմից ներկայացված ցածր գնով:

• **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի նպատակն է տարածքային համագործակցության և մշակութային միջոցառումների իրականացումը, որոնց արդյունքում լուծվում է մի շարք հայապահպանական խնդիրներ: Մասնավորապես իրականացվում են համայնքների հետ համագործակցության ծրագրեր և միջոցառումներ:

6. «Տեղեկատվական և ուսուցողական կայքերի մշակման և սպասարկման ծառայություններ» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 11) ծրագրով նախատեսվել է 30180.0 հազ. դրամ: Ճշտված պլանը կազմել է 30180.0 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 30051.3 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է 128.7 հազ. դրամ, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: Նախորդ տարվա դրամարկղային ծախսը կազմել է 30456.6 հազ. դրամ: 2017 թվականի դրամարկղային ծախսը 405.3 հազ. դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է կումանալ վճարների նվազմամբ:

Ծրագրերը իրականացվել են ամբողջությամբ և ընդգրկված են եղել հետևյալ միջոցառումները.

1. «Հայերն այսօր» էլեկտրոնային բազմալեզու օրաթերթի հրատարակում,
2. «Էլեկտրոնային գրադարանի համալրում»,
3. «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի համալրում և սպասարկում:

Հաշվետու ժամանակահատվածում «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում տեղադրվել է 14944 նյութ, որն իր մեջ ամփոփում է նորություններ, հոդվածներ, հարցազրույցներ՝ արևելահայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով: 2017 թվականին «Հայերն այսօր» էլեկտրոնային պարբերականում բացվել է 3 նոր խորագիր՝ «Հայոց բանակ 25», «Հաջողված պատմություններ», «Հայաստան-

Սփյուռք 6-րդ» համաժողով: Հաշվետու ժամանակաշրջանում libmindiaspora.am կայքում թվայնացվել և տեղադրվել է 3400 էջ նյութ, 110 ամբողջական գիրք, իսկ armdiasporamuseum.com կայքում 300 նյութ և 760 լուսանկար: «Արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը փոխարկիչ» ծրագրի գիտելիքների բազան հարստացել է 4500 հասկացույթով:

7. «Ուսումնական և հանրամատչելի գրականության հավաքագրում և առաքում սփյուռքի համայնքներին» (բաժին 08, խումբ 03, դաս 02, ծրագիր 12) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 9000.0 հազ. դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը, 9000.0 հազ. դրամ, իսկ դրամարկղային ծախսը՝ 8666.7 հազ. դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 9000.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 333.3 հազ. դրամ պակաս է եղել, քան 2016 թվականին, որը պայմանավորված է ստացված հայտերի քանակով: 2017 թվականի փոստով ընդհանուր առմամբ առաքվել է սփյուռքի կրթօջախներին 18000 կտոր ուսումնական նյութ:

Նպատակները.

Ծրագրի նպատակն է ուսումնական, ուսումնամեթոդական գրականության և ուսումնաօժանդակ նյութերի և ՀՀ խորհրդանիշերի, սփյուռքի հայ համայնքներին և հայկական դպրոցներին առաքում:

• Խնդիրները.

Սփյուռքի հայկական կրթօջախներում այսօր կա ուսումնական և հանրամատչելի գրականության պակաս:

2017 թվականին ծրագրի շրջանակներում 16938 կտոր գրականություն առաքվել է մոտ 38 երկրների հայ գաղթօջախների ուսումնական հաստատություններին և կազմակերպություններին, իսկ 2016 թվականին՝ 39544 կտոր գրականություն: 2017 թվականին՝ 22606 կտոր գրականություն պակաս է առաքվել քան 2016 թվականին պայմանավորված այն հանգամանքով, որ 2016 թվականին ստացված հայտերում ուսումնական նյութերի պահանջարկի մեծ մասը կազմել են Այբբենարանը, Ընթերցարանը և Մայրենի լեզվի դասագրքերը՝ համապատասխան աշխատանքային տետրերերով, որոնք փոքր կշռով են, իսկ 2017 թվականին պահանջարկի մեծ մասը եղել են գրքերը, ուսումնական նյութերը, որոնց կշիռը ավելի մեծ է:

8. «Սփյուռքի երիտասարդների հայրենաճանաչության «Արի տուն» ծրագիր (բաժին 08, խումբ 04, դաս 01, ծրագիր 03) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 92000.0 հազ.դրամ: Ծշտված պլանը կազմել է 92000.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 91992.7 հազ. դրամ: Ծշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 7.3 հազ.դրամ է, որը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 91189.8 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 802.8 հազ. դրամով ավել է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է մրցույթում ներկայացված գնային առաջարկով:

Նպատակները.

Ծրագրի նպատակն է սփյուռքում բնակվող 13-20 տարեկան հայազգի երիտասարդների համար կազմակերպել և իրականացնել 14-օրյա ճանաչողական շրջայցեր հայրենիքում: Երիտասարդները 10 օր բնակվում են հայ ընտանիքներում 4-օր ճամբարում: Մասնակցում են թվով 9 ճանաչողական շրջայցերի /Սևան, Էջմիածին, Նորավանք, Խոր Վիրապ և այլն/ ինչպես նաև ճամբարում մասնակցում են հայոց լեզվի, հայկական երգի և պարի դասերին: Գլխավոր նպատակներից է նաև սփյուռքում բնակվող հայազգի երիտասարդների հայապահպանությունը և ոգին:

• Խնդիրները.

Ծրագրի իրականացման արդյունքում լուծվում են մի շարք խնդիրներ: Երիտասարդներին ծանոթացնել հայկական մշակույթին, հայ ընտանիքին, ինչպես նաև ծրագրի մասնակիցներին ավելի մոտեցնել հայրենիքին:

Ծրագրի շրջանակներում իրականացվել են՝ մասնակիցներին պարագաների տրամադրում, տպագրական աշխատանքներ, մասնակիցներին դիմավորում և ճանապարհում, շրջայցեր, սննդի սպասարկում, ծաղիկների գնում և առաքում, դահլիճների վարձակալություն, տեսանկարահանում և լուսանկարանում, փակման հանդիսավոր արարողություն, կեցություն ճամբարում, համակարգող փորձագետներին աշխատավարձի տրամադրում:

9. «Հայաստան–Սփյուռք գործակցություն թեմայով հեռուստահաղորդումների և տեսահոլովակների պատրաստում և հեռարձակում, ձեռքբերում և բազմացում» (բաժին 08, խումբ 03, դաս 01, ծրագիր 09) ծրագրի վերաբերյալ

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսվել է 52600.00 հազ.դրամ: Ծշտված պլանը՝ 52600.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է՝ 52540.0 հազ.դրամ: Ծշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 60.0

հազ.դրամ վերադարձվել է պետ. բյուջե: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 52422.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 118.0 հազ.դրամով ավել է, քան 2016 թվականի, որը պայմանավորված է հեռուստահաղորդումների ավելացմամբ:

Նպատակները.

Ծրագրի նպատակն է պահպանել և զարգացնել կապերը հայրենիք-սփյուռք, սփյուռք-սփյուռք և սփյուռքում ավելի հասանելի դարձնել սփյուռքի նախարարության գործունեությունը, ավելի մանրամասն ներկայացնել իրականացվող ծրագրերն ու դրանց նպատակները, ինչպես նաև համայնքներում տարածել Հայաստանն ու հայկական մշակույթը քարոզող հաղորդումներ և հոլովակներ:

• Խնդիրները.

Ծրագրի իրականացման արդյունքում հայկական հեռուստատեսությամբ և հայկական համայնքներում կցուցադրվեն հայապահպանություն քարոզող և Հայաստանի Հանրապետությունը ներկայացնող հեռուստահաղորդումներ, հոլովակներ և ֆիլմեր:

• Ծրագրի իրականացման ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- «Սփյուռքի ժամ հեռուստահաղորդաշար/40հեռուստահաղորդում/:
- «Մերոնք»- /72հաղորդումների պատրաստում և հեռարձակում/:
- «Հայ Սփյուռք»- /10հաղորդումների պատրաստում և հեռարձակում /:
- «Առավոտ օրաթերթ»- /36նյութ/:
- «Գոլոս Արմենիա»- /30նյութ/
- «Աշխարհասփյուռ» /20 հաղորդումների պատրաստում և հեռարձակում /
- «Հայաստանում կայացած գործարանների մասին» /20հաղորդումների պատրաստում և հեռարձակում /
- «Տոհմաձառ» «Նոր արմատներ» հաղորդաշար /12հաղորդում/
- «Ավանգարդ» թերթում /20նյութ/
- Տեղեկատվական նյութերի տեղադրում «tert.am» /10 նյութ/
- Տեղեկատվական նյութերի պատրաստում և տեղադրում «news.am» /10 նյութ/
- «Հայաստանի հանրային ռադիոընկերություն «Կամուրջ» հաղորդաշար» /50 հաղորդում/
- «Եռագույն» կայք էջում նյութի /10նյութ/
- Սփյուռքի նախարարության գործունեության, կատարված աշխատանքային ծրագրերի մասին պատմող նյութերի հավաքագրում,պատրաստում

- Սփյուռքի համայնքների վերաբերյալ տեսաֆիլմերի պատրաստում և տրամադրում

10. «Գիտական և գիտատեխնիկական հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտություններ» (բաժին 01, խումբ 04, դաս 01, ծրագիր 02) ծրագրի շրջանակներում պետական աջակցություն

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով հաստատվել է 14400.0 հազ. դրամ, որից ճշտված պլանը՝ 14400.հազ.դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 14400.0 հազ. դրամ: 2016 թվականի դրամարկղային ծախսը ևս կազմել է 14400.0 հազ.դրամ: Ծրագիրն իրականացվել է ամբողջությամբ:

- **Նպատակներն ու խնդիրները**

Ծրագրի իրականացման նպատակն է պետական պատվերի միջոցով, մասնագիտացված կազմակերպությունների կողմից իրականացնել սփյուռքին վերաբերվող 12 թեմաների գիտական հետազոտությունների պատվեր:

2017 թվականին ծրագրի շրջանակներում պատվիրվել են թվով 12 գիտական հետազոտություններ հետևյալ կազմակերպություններին.

- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ» ՊՈԱԿ - ին «Արևմտահայերեն կանոնակարգ և խնդիր», «Արևմտահայերենի արդի վիճակը հայկական գաղթօջախներում/Արևմտյան Եվրոպա/» ֆինանսավորման ծավալը կազմել է 2400.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտ» ՊՈԱԿ - ին, «Գրական սփյուռք 2017» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Հայկական հարցը և սփյուռքահայությունը մինչև ԽՍՀՄ փլուզումը ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Նորավանք» գիտական հիմնադրամին, «Իսրայելի, Իրանի, Թուրքիայի, Ադրբեջանի պետական քաղաքականությունը Սփյուռքի նկատմամբ» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամինին, «Սփյուռքի հայ համայնքների իրավական կարգավիճակը (ԵՄ երկրներ ԱՄՆ, ԱՊՀ երկրներ)» «Հայրենիք-Սփյուռք առընչությունները 21-րդ դարասկզբին 2001-2017թթ»

գիտական ծրագրերի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 2400.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

- «ՀՀ ԿԳՆ Երևանի Վ.Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին, «Հայկական Սփյուռքի հնարավորություններն ու ազդեցություններն ՀՀ սոցիալական, քաղաքական գործընթացների վրա» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին «Էլիզաբեթ Թաջիյան Նոր Զուղան եվրոպական աղբյուրներում 17-18-րդ դարերում 2-րդ հատոր» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- «Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն» գիտահետազոտական հիմնադրամին «Ուրացման քաղաքականության արմատները, նորոգյա դրսևորումները և դրանց հետևանքները գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- Սոնա Հարությունյան (Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանի հայագիտության ամբիոնի դասախոս, բ.գ.դ.) «Հայոց ցեղասպանության արձագանքները Իտալիայում 1915» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:
- Հայաստանի ազգային արխիվ «Լիբանանահայ համայնքը 1915-1990թթ (ըստ արխիվային փաստաթղթերի)» գիտական ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսավորման ծավալը կազմել է 1200.0 հազ. դրամ, որը ամբողջությամբ ծախսվել է:

11. «Սփյուռք տարեգրի պարբերականի հրատարակում» ծրագրի վերաբերյալ (Բաժին 08, Խումբ 03, Դաս 02, Ծրագիր 13)

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով հաստատվել է 6000.00 հազ. դրամ: Ճշտված պլանը՝ 6000.0 հազ. դրամ է, իսկ ֆինանսավորումը, դրամարկղային ծախսը կազմել է 5979.2 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 6000.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 20.8 հազ. դրամով պակաս է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է գնման մրցույթում ներկայացված գնային առաջարկով:

Նպատակը

Տարեգրքի նպատակն է արժևորել, գրի առնել, լրացնել և ամբողջական դարձնել սփյուռքի հայ համայնքների գործունեությունը, Հայաստան-Սփյուռք գործակցության ոլորտում իրականացվող ծրագրերը և ձեռնարկները:

Տարեգիրքը կարող է հիմք հանդիսանալ էական քայլեր իրականացնելու Սփյուռքի գիտական, կրթական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում առկա ներուժի հաշվառման մեխանիզմների բարելավման և տվյալների միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ, համապարփակ տեղեկատվություն տարածել տարբեր երկրներում գործող հայկական համայնքների մասին:

Սփյուռք-Սփյուռք և Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդումը, աշխարհասփյուռ հայերի համագործակցության հնարավորությունների ընդլայնումը և միջհամայնքային կապերի սերտացումն այսօր դիտարկվում է, որպես գերակա խնդիր:

Տարեգրքի միջոցով լուսաբանվում է ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից տարվա ընթացքում Սփյուռքի հետ իրականացված ծրագրերի, համահայկական կազմակերպությունների և հոգևոր կառույցների ազգապահպան ձեռնարկները հասանելի դարձնելը աշխարհասփյուռ հայությանը:

12. «Հայրենիք Սփյուռք գործակցության ծրագրերի իրականացում» ծրագրի վերաբերյալ (Բաժին 08, Խումբ 02, Դաս 04, Ծրագիր 04)

ՀՀ 2017 թվականի պետական բյուջեյով հաստատվել է 35473.8 հազ. դրամ: Ճշտված պլանը, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել է 35473.8 հազ.դրամ: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 35511.0 հազ. դրամ: 2017 թվականի և 2016 թվականի դրամարկղային ծախսի տարբերությունը կազմում է 37.2 հազ. դրամ:

Նպատակը.

Հայաստան-Սփյուռք գործակցության վերաբերյալ տեղեկատվական վերլուծական նյութերի պատրաստում և տարածում, համահայկական լրատվական ռեսուրսների (համահայկական կայքերի, տեղեկագրերի, հեռուստատեսային լրատվական հաղորդումների, հեռուստակամուրջների և այլն) ստեղծում:

13. «Պետական հիմնարկների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրի վերաբերյալ (Բաժին 10, Խումբ 09, Դաս 02, Ծրագիր 03)

Նշված ծրագրի ճշտված պլանը կազմել է 7848.0 հազ.դրամ: Դրամարկղային ծախսը՝ 6012.0 հազ.դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի

տարբերությունը կազմում է՝ 1836.0 հազ. դրամ, որը պայմանավորված է սոց. փաթեթի շահառուների նախատեսվածից պակաս լինելու հանգամանքով: Գումարը ետ է վերադարձվել ՀՀ պետական բյուջե: 2016 թվականի դրամարկղային ծախսը կազմել է 6707.8 հազ.դրամ: 2017 թվականին 695.8 հազ. դրամով պակաս, քան 2016 թվականին՝ պայմանավորված սոց. փաթեթի շահառուների թվի նվազմամբ:

14. «ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ» (Բաժին 11, Խումբ 01, Դաս 01, Ծրագիր 01)

Ճշտված պլանը կազմել է 83622.2 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 83411.9 հազ.դրամ:

2017 թվականին ՀՀ կառավարության 25.05.2017թ. 552-Ն որոշմամբ 2017 թվականի մայիսի 28-ին կայանալիք սիրիահայ ձեռագործ վարպետների և հրուշակագործների մասնակցությամբ բարեգործական ցուցահանդես տոնավաճառի կազմակերպման նպատակով հատկացվել է 800.0 հազ. դրամ:

2017 թվականին ՀՀ կառավարության 31.08.2017թ. 1083-Ն որոշմամբ «Հայաստան-Սփյուռք» 6-րդ համահայկական համաժողովը և նախատեսված միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու նպատակով «Հայրենիք Սփյուռք Կենտրոն» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի ձևով ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվել է 62114.2 հազ.դրամ: 2016 թվականին նման միջոցառում չի իրականացվել:

Համաձայն ՀՀ կառավարության 19.10.2017թ. թիվ 1341-Ն որոշմամբ 2017 թվականի հուլիսի 20-29-ը Երևանում կայացած «Հայ մարմնակրթական ընդհանուր միության» 10-րդ համահայկական մարզախաղերին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման համար նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Պարտադիր վճարներ» հոդվածով հատկացվել է 444 հազ. դրամ: Այն փոխանցվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հաշվեհամարին: 2016 թվականին նման միջոցառում չի իրականացվել:

2017 թվականին ՀՀ կառավարության 09.11.2017 թվականի 1439-Ն որոշմամբ «Նվիրաբերություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 20000.0 հազ.դրամ գումար է հատկացվել «Սիրիահայ հիմնախնդիրները համակարգող» հասարակական կազմակերպությանը ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների սիրիահայ ուսանողներին 2017/2018թթ. ուսումնական տարվա ուսման վարձ հատկացնելու նպատակով: Դրամարկղային

ծախսը կազմել է 20000.0 հազ.դրամ: 2016 թվականին պահուստային ֆոնդից ևս հատկացվել է՝ 20000.0 հազ.դրամ:

Համաձայն ՀՀ կառավարության 30.11.2017թ. թիվ 1509-Ն որոշմամբ 2017 թվականի սեպտեմբերի 18-20-ը Երևանում կայացած «Հայաստան–Սփյուռք» 6-րդ համաժողովին մասնակցած օտարերկրյա քաղաքացիների մուտքի արտոնագրի տրամադրման համար նախատեսված պետական տուրքի վճարումից ազատելու արդյունքում չգանձված պետական տուրքի գումարը վճարողների փոխարեն ՀՀ պետական բյուջե վճարելու նպատակով ՀՀ սփյուռքի նախարարությանը «Պարտադիր վճարներ» հոդվածով հատկացվել է 264.0 հազ. դրամ: Այն փոխանցվել է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության հաշվեհամարին: 2016 թվականին նման միջոցառում չի իրականացվել:

15. «Սփյուռքի հայկական կրթական հաստատություններին ուսումնական և օժանդակ նյութերի մշակում և տրամադրում» (Բաժին 09, Խումբ 06, Դաս 01, Ծրագիր 19)

2017 թվականի ՀՀ պետական բյուջեով հաստատվել է 98000.0 հազ.դրամ: Ճշտված պլանը՝ 98000.0 հազ. դրամ: Դրամարկղային ծախսը կազմել է 97315.2 հազ. դրամ: Ճշտված պլանի և դրամարկղային ծախսի տարբերությունը՝ 684.8 հազ. դրամ վերադարձվել է ՀՀ պետ բյուջե: 2016 թվականին դրամարկղային ծախսը կազմել է 97134.0 հազ. դրամ: 2017 թվականին դրամարկղային ծախսը 181.2 հազ.դրամով ավել է, քան 2016 թվականին, որը պայմանավորված է ծրագրի երկու աշխատակիցների հետ կնքած պայմանագրի ժամկետներից: 2017 թվականին կնքվել է 9 ամիս ժամկետով, իսկ 2016 թվականին՝ 6 ամիս :

Ծրագրի նպատակն է՝

ա) աջակցել սփյուռքահայության լեզվամշակութային ուժացման դեմ պայքարին, հայեցի կրթության ու դաստիարակության, հայ ինքնության ճանաչմանը, ազգային ինքնագիտակցության ձևավորմանը, Սփյուռքի հայապահպանության ծրագրերի իրականացմանը,

բ) նպաստել համայնքներում կրթական ծրագրերի իրականացմանը, աջակցել կրթօջախներում ուսումնական գործընթացի կազմակերպմանն ու որակի բարելավմանը:

Ծրագրով բավարարվել են աշխարհի ավելի քան 40 երկրների 371 կրթօջախների հայտեր. տրամադրվել են 87500 կտոր ուսումնական գրականություն և ուսումնաօժանդակ նյութեր:

16. «Արտասահմանյան պատվիրակությունների ընդունելությունների համար նախատեսված ծախսեր» (Բաժին 01, Խումբ 01, Դաս 03, Ծրագիր 03)

Ճշտված պլանը կազմել է 980.0 հազ.դրամ, դրամարկղային ծախսը 546.2 հազ.դրամ:

2017 թվականի ՀՀ վարչապետի 31.05.2017թ. 513-Ա որոշմամբ Կիպրոսի հանրապետության հումանիտար և արտերկրյա հարցերով նախագահի հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի գլխավորած պատվիրակության 2017 թվականի հունիսի 19-20-ը ՀՀ-ում գտնվելու ընթացքում կեցության և ծրագրով նախատեսված միջոցառումների համար հատկացվել է 250.0 հազ. դրամ:

2017 թվականի ՀՀ վարչապետի 13.12.2017թ. 1465-Ա որոշմամբ Կիպրոսի հանրապետության նախագահի՝ հումանիտար և արտերկրյա հարցերով նախագահի հանձնակատար Ֆոտիու Ֆոտիսի և Հունաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարի տեղակալ Տերենս-Նիկոլաոս Քուիքի գլխավորած պատվիրակությունների՝ 2017 թվականի դեկտեմբերի 14-16-ը Հայաստանի Հանրապետությունում գտնվելու ընթացքում կեցության և ծրագրով նախատեսված միջոցառումների համար հատկացվել է 730.0 հազ. դրամ: 2016 թվականին նման ծրագիր չի իրականացվել: